ԿԱՐԾԻՔ

«Արդարադատության ակադեմիայի» մասին և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ

ՀՀ Արդարադատության նախարարության կողմից հանրային քննարկման է ներկայացվել «Արդարադատության ակադեմիայի» մասին և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագիծը (հետայսու՝ Նախագիծ)[1]:

Նախագծով լուրջ փոփոխություններ են նախատեսվում Արդարադատության ակադեմիայի վերաբերյալ գործող կարգավորումներով:

Ներկայացվող կարծիքով առավել ուշադրություն դարձվում է փոփոխություններով Արդարադատության ակադեմիայի ինստիտուցիոնալ կառուցվածքին ու կառավարմանը վերաբերող հարցերին, կառավարման մարմինների կազմին, ձևավորմանն ու իրավասություններին, Ակադեմիայի ֆինանսավորման առնչությամբ կարգավորումներին:

Այսպես, գործող կարգավորումներով Արդարադատության Ակադեմիայի կառավարման համակարգը ներառում է Ակադեմիայի կառավարման խորհուրդը և ռեկտորին: Ներկայումս Ակադեմիայի Կառավարման խորհուրդը պատասխանատու է Ակադեմիայի կառավարման համար, իսկ ռեկտորը պատասխանատու է ընթացիկ ղեկավարման համար:

Նախագծի հիմնավորմամբ նշվել է, որ Խորհրդի լիազորությունների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանց մի մասը (կարգապահական տույժի միջոց կիրառելը, ունկնդրին ցուցակից հանելու միջնորդությամբ իրավասու մարմնին դիմելը, ունկնդրին տարկետում տրամադրելը և այլն) չեն կարող բխել այս մարմնի կառավարման գործառույթից, իսկ մյուս կողմից չեն տեղավորվում Ակադեմիայի ռեկտորի ընթացիկ ղեկավարման շրջանակներում, քանի որ ունեն

[1] https://www.e-draft.am/projects/5647/about

գիտաուսումնամեթոդական բնույթ։ Բացի այդ, Ակադեմիայի ռեկտորի հրամանի հիման վրա գործում է Ակադեմիայի գիտական խորհուրդը, որն ունի նշանակալի դերակատարում Ակադեմիայի ուսումնամեթոդական նյութերի մշակման գործում։

Առաջարկվող փոփոխություններով Ակադեմիայի կառավարումն իրականացվում է Ակադեմիայի կառավարման խորհուրդը, Ակադեմիայի ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Ակադեմիայի գիտաուսումնական խորհուրդը։ Իսկ Ակադեմիայի ընթացիկ գործունեության անմիջական ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը, այն է՝ Ակադեմիայի ռեկտորը։

Առաջարկվող կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, սակայն, որ ըստ փոփոխությունների չլուծված է մնում կառավարման մարմինների կողմից սահմանվող գործառույթների իրականացման ու տարանջատման հարցը։ Օրինակ, Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվում է, որ Խորհուրդը՝

Ռեկտորի ներկայացմամբ հաստատում է Ակադեմիայի տարեկան ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտը), ինչպես նաև Արդարադատության նախարարության միջոցով Կառավարություն է ներկայացնում առաջարկություններ Ակադեմիայի տարեկան ծախսերի նախահաշվի (բյուջետային հայտի) վերաբերյալ։

Այնուհետ, Օրենքի 14-րդ հոդվածի 3-ր մասի համաձայն՝ Գիտաուսումնական խորհուրդը՝ *Ռեկտորի ներկայացմամբ հավանություն է տալիս Ակադեմիայի տարեկան ծախսերի նախահաշվին։*

Անհասկանալի է Խորհրդի և Գիտաուսումնական խորհրդի համար համանման գործառույթի նախատեսումը, պրակտիկ կիրառման խնդիրներից խուսափելու համար ցանկալի կլիներ տարեկան ծախսերի նախահաշվի հավանությունն ու հաստատումը վերապահել մեկ մարմնի։

Նմանատիպ խնդիր առաջ է գալիս նաև Ռեկտորի և Գիտաուսումնական խորհրդի գործառույթների առնչությամբ։ Մասնավորապես, Նախագծի 17-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ *Ռեկտորը կազմակերպում է Ակադեմիայում ուսումնական գործընթացը։*

Նախ այս առնչությամբ անհրաժեշտ է լրացուցիչ հստակություն և պարզաբանում, թե օրենսդիրը ինչ է նախատեսում կազմակերպման ներքո։ Մյուս կողմից, նույն Նախագծի 14-րդ հոդվածի 4-10 կետերով Գիտաուսումնական խորհրդին վերապահված լիազորությունները կարող են նույնպես որակվել որպես Ակադեմիայում ուսումնական գործընթացի կազմակերպում։

Այսինքն, այս առնչությամբ ևս անհրաժեշտ է Ռեկտորի և Գիտաուսումնական խորհրդի իրավասությունների հստակեցում։

Խորհրդի և Գիտաուսումնական խորհրդի կազմը

Ըստ Նախագծի հոդված 9-ի՝

1. Խորհուրդը բաղկացած է 6 անդամից։
2. Խորհրդի կազմում որպես անդամ ի պաշտոնե ընդգրկվում են՝
    1. Արդարադատության նախարարը.
    2. Բարձրագույն դատական խորհրդի նախագահը.
    3. Վճռաբեկ դատարանի նախագահը.
    4. Գլխավոր դատախազը.
    5. Քննչական կոմիտեի նախագահ.
    6. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ։

Նախագծի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գիտաուսումնական խորհուրդը բաղկացած է 21 անդամից։
2. Գիտաուսումնական խորհրդի կազմում ընդգրկվում են.

1. արդարադատության նախարարի նշանակմամբ արդարադատության նախարարի տեղակալը և Արդարադատության նախարարության երկու ներկայացուցիչ.
2. Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված երեք դատավոր՝ քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացման ներկայացվածությամբ.
3. Գլխավոր դատախազի նշանակմամբ գլխավոր դատախազի տեղակալը և դատախազության երկու ներկայացուցիչ.
4. Քննչական կոմիտեի նախագահի նշանակմամբ Քննչական կոմիտեի նախագահի տեղակալը և Քննչական կոմիտեի երկու ներկայացուցիչ.
5. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի նշանակմամբ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալը և Հակակոռուպցիոն կոմիտեի երկու ներկայացուցիչ.
6. Ռեկտորի նշանակմամբ Ակադեմիայի պրոռեկտորը և Ակադեմիայի երկու ներկայացուցիչ.
7. Խորհրդի նշանակմամբ երեք իրավաբան-գիտնականներ՝ քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացման ներկայացվածությամբ։

Գիտաուսումնական խորհրդի 21 հոգանոց կազմ նախատեսելու կարգավորումը Նախագծի հիմնավորմամբ որևէ անդրադարձ չի ստացել: Նմանապես, հիմնավորում չի ստացել նախատեսված գերատեսչություններից ներգրավվող անդամների քանակը: Նախագծից և հիմնավորումից պարզ չէ 3 թեկնածուների ոլորտային ուղղվածությունները և անհրաժեշտությունը:

Այս առնչությամբ առաջարկվում է.

- **հիմնավորել և, ըստ այդմ, վերանայել Գիտաուսումնական խորհրդի կազմում տարբեր գերատեսչություններից ներկայացուցիչների քանակը**
- **Գիտաուսումնական խորհրդի կազմում Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվող դատավորների քանակը մեծացնել՝ նախատեսելով նաև դատավորներ մասնագիտացված բոլոր դատարաններից:**

Նախագծի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Գիտաուսումնական խորհրդի նիստերը նախագահում է Ակադեմիայի ռեկտորը (հոդված 15): Գիտաուսումնական խորհրդի նախագահի ինստիտուտ, սակայն, նախագծով նախատեսված չէ: Նախագիծը չի սահմանում Խորհրդի ընթացիկ գործունեության կազմակերպական և վերահսկողական լիազորություններն իրականացնող պաշտոնատար անձին, այդ թվում՝ արդյո՞ք այդ լիազորությունները իրականացնելու է Ռեկտորը:

Այս առնչությամբ առաջարկվում է.

- **հստակեցնել Գիտաուսումնական խորհրդի նախագահի ինստիտուտը, դրա դերը և լիազորությունները:**

Ակադեմիայի ֆինանսավորումը

Նախագծի 7-րդ հոդվածի համաձայն՝

1. Ակադեմիան ֆինանսավորվում է պետական բյուջեից՝ առանձին բյուջետային տողով:
2. Ակադեմիայի ֆինանսավորումը պետք է իրականացվի այնպես, որ ապահովվի նրա բնականոն գործունեության համար անհրաժեշտ ծախսերը:
3. Ակադեմիայի բոլոր եկամուտներն ու ծախսերը նախատեսվում և օգտագործվում են տարեկան նախահաշվին (բյուջետային հայտին) համապատասխան:

4. Նախահաշիվը (բյուջետային հայտը) Կառավարությունն ընդունում և ընդգրկում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկությունների դեպքում այն պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Ազգային ժողով: Կառավարությունն Ազգային ժողով և Արդարադատության նախարարություն է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ առարկությունների հիմնավորումները:

Նախագծի 4-րդ հոդվածի համաձայն՝ **«Ակադեմիան սույն օրենքի հիման վրա ստեղծված անկախ և ինքնակառավարվող պետական ոչ առևտրային կազմակերպություն է […]»:**

Յուրաքանչյուր կառույցի իրական անկախության կարևոր նախադրյալներից և երաշխիքներից մեկը ֆինանսական անկախությունն ու ֆինանսավորման հետ կապված հարցերում վճռորոշ մասնակցությունն է: Այս առնչությամբ, նախագծի վերոնշյալ հոդվածի և այլ կարգավորումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ակադեմիան ինքնուրույն մասնակցություն չունի ոչ բյուջետային հայտի կազմմանը, ոչ դրա առնչությամբ առարկությունների հակափաստարկմանը, քանի որ այդ գործընթացը իրականացվում է Արդարադատության նախարարության միջոցով:

Այս առնչությամբ առաջարկվում է.

- **Նախագծով Ակադեմիայի ֆինանսավորման վերաբերյալ հոդված 7-ի կարգավորումներում սահմանել, որ Արդարադատության Ակադեմիան կենտրոնական դեր և մասնակցություն է ունենում բյուջետային հայտի կազմման և քննարկման գործընթացում:**

Միաժամանակ, առաջարկում ենք Նախագիծը քննարկել շահագրգիռ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: